Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հունվարի 15-ի N 58-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆԸ ՍՏԱՆԱԼՈՒ

1. Պատվաստված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կանխարգելիչ պատվաստումների վկայականը ստանում է պատվաստում իրականացրած բժշկական կազմակերպությունից:

2. Կատարված կանխարգելիչ պատվաստումները բժշկական կազմակերպության կողմից գրանցվում են էլեկտրոնային առողջապահության համակարգում (այսուհետ՝ համակարգ):

3. Բժշկական կազմակերպության կողմից առաջին պատվաստման մասին տեղեկատվությունը համակարգ մուտքագրելուց հետո համակարգն ինքնաշխատ եղանակով ստեղծում է կանխարգելիչ պատվաստումների վկայական պատվաստված անձի համար:

4. Կանխարգելիչ պատվաստումների վկայականում շարունակաբար ներառվում են համակարգ մուտքագրված պատվաստումների վերաբերյալ բոլոր տվյալները:

5. Համակարգից ցանկացած պահի հնարավոր է ձևավորել կանխարգելիչ պատվաստումների վկայականը, տպել կամ ստանալ դրա կոշտ կրիչով տարբերակը պատվաստված անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

6. Պատվաստված անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կանխարգելիչ պատվաստումների վկայականը կարող է ստանալ պատվաստումից հետո 24 ժամվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.01.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ